




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10.038

ЗКСМ1

Р-96

1 DEC 2009 24 SEP 2006

Կ. ԲՈՒՋԻԱՇՎԻԼԻ

ՎՐԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՈՄՈՐԸ ՆՈՐ ԵՏԱՊՈՒՄ

ՅԿԸՄԻ

Բ-96

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

„ԱԽՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ“

ԹԻՖԼԻՍ 1931 թ.

3 KCM1
P-96

11 MAR 2013

10.038

34748-12

Թիֆլիս, տպարան լրագրողների
հրատարակչության «Կոլլեկտիվ»
Գրավիտ № 821, Տիրաժ № 5000.
Պատվեր № 1882.



34748-12

ՎՐԱՍՏԱՆԻ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՇՐՋԱՆՈՒՄ*)

Վր. ԼԿՅՆՄ IX-րդ համագումարից անցել է 2 և
կես տարուց ավելի: Միության համավրաստանյան X-րդ
համագումարի աշխատանքի պայմանները զգալիորեն
տարբերվում են այն պայմաններից, վերոնշյալ կային
Վր. ԼԿՅՆՄ 9-րդ համագումարի ժամանակ: Յեթե Վր.
ԼԿՅՆՄ IX-րդ համագումարը հավաքվել էր այն ժա-
մանակ, յերբ յերկիրը, յաջողությամբ լուծելով վերա-
կանգման ժամանակաշրջանի խնդիրները, մտել էր ժո-
ղովրդական տնտեսության վերակառուցման ժամանա-
կաշրջանը, Վր. ԼԿՅՆՄ X-րդ համագումարը հավաքվեց
այն մոմենտին, յերբ մեր յերկիրը իր զարգացման
նոր աստիճանին հասնելով, թևակոխել է սոցիալիզմի
ժամանակաշրջանը:

Մենք այժմ պարում և աշխատում ենք ամբողջ
մարդկային պատմության մի նշանակալից մոմենտ:
Այս 2 և կես տարում յերկրում տեղի ունեցան

*) Վր. ԼԿՅՆՄ Համավրաստանյան X-րդ համագումարում ընկ-
րուջի աշխիւ կատարած զրկուցման վերամշակված և կրճատված
ստենոգրաման:

հակայական փոփոխություններ, խոշորագույն սոցիալ-տնտեսական և դասակարգային տեղաշարժեր: Ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանը դարձել է հաղթանակող սոցիալիզմի սիմվոլը: Կռիվներում փորձված լենինյան կոսակցության և նրա Կենտրոնական Կոմիտեի ղեկավարությամբ մենք արդեն սկսել ենք ԽՍՀՄ սոցիալիստական տնտեսության հիմքի կառուցման ավարտումը:

Սոցիալիստական ինդուստրիայի և մեր գյուղի սոցիալիստական վերակազմության հաղթական աճը, քաղաքի և գյուղի միջև յեղած անհամապատասխանության վոչնչացման պրոցեսը, աշխատանքի կոմունիստական ձևերի աճը, հարստահարության բաղա-յի և շահագործող դասակարգերի վոչնչացումը, դեպի մտավոր և ֆիզիքական աշխատանքի միջև յեղած հա-կադրությունների վերացումը տանող շարժումը, մաս-սաների ներգրավումը պետական ապարատի մեջ, կնոջ տնտեսական ազատագրումը, ներգրավելով նրան ար-տադրության մեջ, ազգությունների անհավասարու-թյան վերացումը, կենցաղի կոլեկտիվացումը,—այս բոլոր մեծագույն գործերը մեզ պարզ ցույց են տալիս, թե ինչպես սոցիալիզմը հաստատուն և հաղթական քայլերով մտնում է մեր կյանքի մեջ: Արդյոք իսկա-պես մենք մտել ենք սոցիալիզմի դարաշրջանը: Սո-վորաբար մեր ժամանակաշրջանը կոչվում է անցողա-կան. 1918 թ. Լենինը «Ձախ յերեխայամտության մասին» գրած իր նշանավոր հոդվածում առաջին ան-

գամ բնույթագրեց այդ ժամանակաշրջանն տնտե-սական կյանքի հինգ կողմերով:

Նա անցողական է կոչվում նաև այժմ, 1930 թվին, յերեկոյներից մի քանիսը, իբրև հնացած, արդեն խորտակվում են, իսկ այդ կողմերից մեկը՝ նորը արդյու-նաբե-րության և գյուղատնտեսության բնագավառում աճում և զարգանում է չտեսնված արագությամբ: Կա-րելի՞ յե արդյոք ասել, վոր այս յերկու անցողական ժամանակաշրջանները միատեսակ են, վոր նրանք ար-ժատապես չեն տարբերվում իրարից: Պարզ է, վոր չի՞ կարելի: 1928 թ. ինչ ենք ունեցել մենք ժողովրդա-կան տնտեսության բնագավառում: Քայքայված ար-դյունաբերություն և «զաժիգալիաներ», մասսայական կոլխոզների և սովխոզների բացակայություն, նոր բուրժուազիայի աճ քաղաքում և կուլակության աճ գյուղում: Իսկ ի՞նչ ունենք այժմ: Վերականգնված և վերակառուցվող սոցիալիստական արդյունաբերու-թյուն, սովխոզների և կոլխոզների մի ամբողջ սիստեմ, վորոնք ԽՍՀՄ-ի միմիայն զարնան բոլոր ցանքերի 40%-ից ավելին ունեն. մենք ունենք մեռնող «նոր» բուրժուազիա քաղաքում, մեռնող կուլակություն՝ գյուղում: Այնտեղ էլ անցողական ժամանակաշրջան է, այնտեղ էլ: Բայց և այնպես վոչ վոք չի կարող բացասել, վոր մենք կանգնած ենք կապիտալիստա-կան վերջին լուրջ դասակարգի՝ կուլակների լիկվիդա-ցիայի շեմքին: Պարզ է, վոր մենք արդեն դուրս յենք յեկել անցողական շրջանից՝ հին մտքով, թևակոխելով

սոցիալիստական ուղղակի և ծավալուն շինարարարու-
թյան ժամանակաշրջանը ամբողջ ֆրոնտով: Պարզ է,
վոր մենք արդեն մտել ենք սոցիալիզմի ժամանակա-
շրջանը, քանի վոր սոցիալիստական սեկտորը այժմ
իր ձեռքն է առել ամբողջ ժողովրդական տնտեսու-
թյան բոլոր լծակները, թեպետ և դեռ հեռու ենք սո-
ցիալիստական հասարակարգ կառուցելու և դասակար-
գային տարբերությունները վոչնչացնելու ժամանա-
կաշրջանից: (Ստալին. յեղրափակման խոսք 16-րդ հա-
մագումարում):

Բոլորին յայտնի չե, վոր մենք դրան հասնա՞յ
վոչ միանգամից, այլ մեր կուսակցություն անցյալ
ամբողջ ճիշտ լենինյան քաղաքականություն շնորհիվ,
ինչպես յերկրի ինդուստրացման հարցերում, այնպես
և գյուղատնտեսությունում ու գյուղացիության հետ մեր
ռենեցած փոխհարաբերությունների սոցիալիստական
վերակազմության հարցերում: Բոլորը գիտեն, վոր
մենք մեր վճռական աջողությունը՝ յերկրի թեկու-
խումը սոցիալիզմի ժամանակաշրջանը ձեռք ենք բե-
րել արշավող սոցիալիզմի և՛ ներքին և՛ արտաքին բո-
լոր թշնամի դասակարգային ուժերի սրված դիմա-
դրություն պայմաններում:

Հնգամյա պլանի յերկու տարի արդեն կատար-
վել է, պլան, վոր մեր թշնամիները համարում եյին
«ցնորամիտ ֆանտազիա»: Ի՞նչպիսի չե այդ յերկու
տարիների հանրագումարը:

ԽՍՀՄ պետական խոշոր արդյունաբերությունը

1929—30 թ. տալով ընդհանուր արտադրանքի 25%
աճ, գերադասեց հնգամյա պլանի առաջադրու-
թյունն այս տարվա համար 5%-ով, մինչդեռ հնգամյակի
առաջին տարին գերազանցեց հնգամյա պլանի նախա-
գծումներն 3%-ով: Հնգամյակի առաջին յերկու տարի-
ների հետևանքով սոցիալիստական պետական արդյու-
նաբերությունը տվեց ժողովրդական տնտեսությունը
30,5 միլիարդ ռուբլու արտադրանք, հնգամյա պլանի
29,3 միլ. ռ. փոխարեն» (անփոփոխ գներով):

Առանձնապես զգալի յեղան արդյունաբերության
արտադրության միջոցներ արտադրող ճյուղերի աջո-
ղությունները. հնգամյակի յերկու տարում ծանր ար-
դյունաբերությունը տվեց յերկրին 13,8 միլիարդ ռուբ-
լու արտադրանք, հնգամյա պլանի 12,5 միլ. ռուբլու
փոխարեն:

Ի՞նչ ունենք Անդրկովկասում և Վրաստանում:

Անդրկովկասյան ֆեդերացիան, մասնավորապես
Վրաստանը ևս, Խորհրդային Միության հետ միասին
բռնել է ինդուստրացման լայն ուղին, ագրարային
հանրապետությունը ինդուստրիալ-ագրարային հան-
րապետություն դարձնելու ուղին: Դեռ ավելին. չի կա-
րել անուշադրության մատնել այն փաստը, վոր մի
շարք ճյուղերում Անդրկովկասի արդյունաբերության
զարգացման տեմպերը համեմատաբար ավելի արագ
են կատարվում, քան թե ԽՍՀՄ մյուս շրջանների
զարգացման տեմպերը, այսպես՝ հնգամյակի յերկրորդ
տարում համալիտվենական արդյունաբերության ար-

տաղրանքի մեջ կազմեց 25%: Իսկ Անդրկովկասի արդյունաբերությունն արտադրանքի մեջ նույն ժամանակամիջոցում կազմում է 58%: այսինքն ավելի քան կրկնակի: Պրակտիկան ցույց տվեց, վոր ամբողջ իՍՍՀՄ-ի պես Անդրկովկասի ժողովրդական տնտեսություն մի շարք վճռական գյուղերում դրսևորվեցին նոր հնարավորություններ՝ կատարելու հնգամյակը վոչ թե չորս, այլ յերեք տարում և ավելի պակաս (ինչպես որինակ՝ Նավթային արդյունաբերության բնագավառում):

Նման տեմպով է զարգանում նաև Վրաստանի արդյունաբերությունը, այսպես որինակ՝ յերեք Վրաստանի արդյունաբերության արտադրանքի արժեքը 1923—24 թվին հավասար էր 27,022 հազ. ռուբ., ապա 1929—30 թվի արտադրանքի արժեքը հասավ 159 միլ. ռուբլու, այսինքն մենք ունենք արտադրանքի աճ 6 տարում 152 միլ. ռուբ. կամ 441%:

Տարեցտարի բարձրանում է Վրաստանի արդյունաբերության տեսակատար կշիռը ի հաշիվ գյուղատնտեսության տեսակատար կշռի իջեցման, վոր նշանակում է ագրարային Վրաստանը ինդուստրիալ-ագրարային յերկիր դարձնելու արագ պրոցես: Մենք Վրաստանում խորհրդային իշխանության գոյության ընթացքում կառուցել ենք մի շարք խոշոր Իլեքտրակայաններ, գործարաններ և ֆաբրիկաներ: Մենք կառուցել ենք Զագես, ավարտվում է Ռիոնգեսի, Աբգեսի, Ալազանգեսի կառուցումը: Մենք կառուցել ենք

խոշոր զիգանտներ՝ ցեմենտի գործարան Կասպիյում, մահուլի գործարան Թիֆլիսում, մենք ավարտում ենք այնպիսի խոշորագույն ձեռնարկությունների կառուցումը, ինչպես՝ ֆերո-մարգանցային գործարանը, Ստալինիստոյը (քարածուխ), Բզիբի կոմբինատը, Սե-ծովային յերկաթուղին և այլն:

Հնգամյակի յերկրորդ տարվա հետեանքով, կուտակցության զիծը, վորի նպատակն է յերկրի սոցիալիստական ինդուստրացումը, մի անգամ ևս ցույց տվեց իր փայլուն հաղթանակը և հաստատեց այդ զծի բացարձակ ճշտությունը: Այդ զիծն ապահովեց նաև «ով-ում» հարցի լուծումը արդյունաբերության մեջ սոցիալիզմի ոգտին:

Հնգամյակի առաջին յերկու տարիների այդ վըճուական հաղթանակներից յեկնելով, կուտակցությունը ըանվոր դասակարգի և բոլոր աշխատավորների առաջ ավելի պատասխանատու խնդիրներ դրեց հնգամյակի յերրորդ վճռական տարում: Մենք արդեն թեկադիսել ենք հնգամյակի յերրորդ վճռական տարին: 1931 թվի վերջերում արդյունաբերական արտադրանքի աճը մեծանալու յե 45 տոկոսով: Կսկսեն աշխատել 500 նոր ձեռնարկություններ: 1931 թվի պլանի կատարումով իՍՍՀՄ-ն կդրվի ըստ չուգունի և քարածուխի 4-րդ տեղը և ըստ նավթի՝ 2-րդ տեղն ամբողջ աշխարհում: Ժողովրդական յեկամուտն կավելանա 49 միլիարդ ռուբլով: Յեկնելով այդ բանից՝ կապիտալ ներդրումը կկազմի 17 միլիարդ ռուբլի: Այդպիսով՝ իՍՍՀՄ ժո-

զովորական տնտեսութեան զարգացման 1931 թ. պլանով նախատեսված տեմպերը վոչ միայն կապահովեն հնգամյակի կատարումը 4 տարում, այլև վճռական ճյուղերում նրանք (տեմպերը) ապահովում են հնգամյակի կատարումը 3 տարում և ավելի պակաս ժամանակում:

Յերկրի ինդուստրացիան արագ թափը և հնգամյակի առաջին յերկու տարիների աշուղտությունները պայմաններ ստեղծեցին յիտաժնաց անհատական գյուղացիական տնտեսությունը կոլխոզային և սովխոզային շինարարութեան հիմունքներով հաշտութեամբ վերակազմելու համար: Հնգամյա պլանի առաջագործությունները կոլլեկտիվացման բնագավառում զգալիորեն գերազանցվեցին և կատարվեցին հնգամյակի առաջին յերկու տարում: Կուսակցության ճիշտ քաղաքականութեան հետևանքով՝ միջակ մասսաների վճռական շրջադարձը դեպի սոցիալիզմ՝ իր ամենափայլուն արտահայտությունը գտավ կոլխոզային հզոր շարժման մեջ, վորը 1929 թվի վերջին ընդգրկել իր միլիոնավոր գյուղացիական տնտեսություններ: Չնայած 1930 թվի գարնան կոլխոզային շինարարութեան պրակտիկայում թույլ տրված «ձախ» սխալներին, ձեռք են բերվել խոշորագույն նվաճումներ: 1930 թվի դեկտեմբերի 1-ին, յիթե հաշվենք ԽՍՀՄ բոլոր շրջանները և գյուղատնտեսության բոլոր ճյուղերը (հողագործություն, անասնաբուծություն, ձկնորսություն, վորսորդություն), կոլխոզներում համախմբված եյին 6,15

միլ. ավելի գյուղացիական տնտեսություններ, այսինքն 24,1%: Իսկ հիմնական հացահատիկային շրջաններում կոլլեկտիվացման տոկոսը կազմում եր 49,3: Վրաստանում 1930 թվի նոյեմբերի 1-ին կոլլեկտիվացման տոկոսը 21-ից ավելի յեր:

Յերկրում հացահատիկային պրոբլեմի լուծումը հիմնականում հանդիսացավ անմիջական արդյունք՝ կոլխոզային և սովխոզային շինարարութեան բնագավառում ձեռք բերված խոշորագույն նվաճումների:

Համայնացրած սեկտորի 1930 թվին հավաքած հացահատիկի տեսակարար կշիռը ապրանքային արտադրանքի ձևով կազմեց ամբողջ ապրանքային արտադրանքի մոտ 50%-ը, պլանի վերջին տարվա համար հնգամյակով նախատեսված 43%-ի դիմաց:

Կոլխոզային շինարարութեան աշուղտությունները և չքավոր-միջակ զանգվածների մասսայական շարժումը դեպի կոլլեկտիվացում՝ վորոշեցին դասակարգային ուժերի նոր փոխադարձ հարաբերությունը յերկրում, քանի վոր կոլխոզ մտած միջակը դառնում և կուսակցության և խորհրդային իշխանութեան հաստատուն նեցուկը գյուղում: Հենց դա եր, վոր թույլ տվեց կուսակցությանը կուլակություն սահմանափակման քաղաքականությունից անցել կուլակության, իբրև դասակարգի, համատարած կոլլեկտիվացման հիման վրա վերացնելու լուրճագին:

Չոշափելով մյուս ցուցանիշները (ցանքային տարածությունների աճը, կոնտրակտացիա, սովխոզ-

ների աճ և ալյն), ընթացիկ 1931 թվիլը պետք է վորոշի չքավոր—միջակ տնտեսությունների նոր հզոր հոսանքը դեպի կոլխոզները: 1931 թվի համար կուսակցությունը խնդիր է դրել՝ ապահովել Ուկրայինայի (հարթավայր), Հյուսիսային Կովկասի, Ներքին Վոլգայի, Միջին Վոլգայի (Զավոլժիյե) ընդգրկումը կոլլեկտիվ տնտեսություններով միջին հաշվով գյուղական տնտեսությունների 80 տոկոսից վոչ պակաս, վոր նշանակում է, թե այդ շրջանների համար հիմնականում ավարտվում է համատարած կոլլեկտիվացումը, և լրվիրդացիայի յե յենթարկվում կուլակությունը, իբրե դասակարգ: Հատահատիկային մյուս շրջանները՝ Կենտ. Սև-հողյան շրջանը, Սիբիրը, Ուրալը, Ուկրաինյան (անտառային և դաշտային մասը), Կազակստանը (հացահատիկային շրջանները) ապահովելու յեն գյուղացիական տնտեսությունների 50 տոկոսի կոլլեկտիվացումը: Սպառող շերտի հացահատիկային տնտեսություններում՝ 20—25%: Իսկ ինչ վերաբերում է բամբակային և ճակնդեղային շրջաններին, կոլլեկտիվ տնտեսություններով ընդգրկվելու յեն տնտեսությունների ընդհանուր թվի առնվազն 50%-ը:

Իսկ ինչ վերաբերում է Վրաստանին, Վր. Կոմկուսի Կենտրոնական Կոմիտեն, յեղնելով Համկոմկուսի Կենտկոմի ցուցմունքներից, դրեց խնդիր՝ հասցնել գյուղացիական տնտեսությունների ընդգրկումը կոլխոզներով 1931 թվին մինչև 30%, բամբակային շրջաններում՝ մինչև 50%: Այստեղ հարկավոր է առանձ-

նապես ընդգծել տեխնիկական մշակույթների դարգացման խոշոր նշանակությունը Վրաստանում: Արագ աճող արդյունաբերությունը յեռանգուն կերպով առաջադրում է հումքի բազայի ընդարձակման և ամրացման խնդիրը սոցիալիստական արդյունաբերության համար: Ցանքային տարածությունների ընդարձակումը տեխնիկական մշակույթների համար (բամբակ, կանեփ և ալյն), վոչ շահավետ և հացահատիկային մշակույթների կոլլեկտիվացումը և մեքենայացումը դրվելու յեն իբրե որվա կարևորագույն հերթական մարտարտական խնդիր: Անդրկովկասի և մասնավորապես Վրաստանի պայմաններում մենք ունենք ամենը, ինչ ինչ անհրաժեշտ է, այդ խնդիրն իրագործելու և Անդրկովկասի ու Վրաստանի մի շարք շրջանները մեր տեղական և միութենական արդյունաբերության հումքի հզոր բազաները դարձնելու համար: Ահա թե ինչու միանգամայն պատահական չե, վոր մենք միայն 1931 թվի ընթացքում պետք է ունենանք Անդրկովկասում միայն բամբակով ցանված 250 հազ. հեկտար տարածություն, և ամբողջ Միության մեջ ընդհանրապես տեխնիկական մշակույթների տարածությունը շատ ավելի մեծ է, քան թե Գերմանիայի ամբողջ հողամասը:

Այժմ կարևորագույն, և ամենավճռական դեր է ստանում արագությամբ վերակազմվող գյուղատնտեսության մեքենայացման հարցը: Պետք է նշել, վոր, չնայած մեր ունեցած խոշոր նվաճումներին, վրացա-

կան գյուղը տրակտորներով և գյուղատնտեսական ուրիշ գործիքներով մատակարարելու բնագավառում, այնուամենայնիվ մենք դեռ չենք կարող բավարարել մեր գյուղի աճող կարիքը: Յեվ միայն այն ժամանակ կարող ենք ապահովել այդ պահանջը, յերբ կըսկսեն աշխատել մեր բոլոր տրակտորային գործարանները: Յեղած հնարավորութիւնների դեպքում 1931 թվին յենթադրվում է տրակտորների թիվը Վրաստանում հասցնել մինչև 674: Խնքնուտոնիքյան հասկանալի յե, վոր անթույլատրելի է վնասակար է կոլխոզային շարժման տեմպերի թուլացումը կամ վոր է չափով նվազեցումը տրակտորների և գյուղատնտեսական մյուս մեքենաների բացակայության պատճառով, վորովհետև նման հարցադրումը վոչ մի ընդհանուր բան չունի մեր կուսակցության ղերեկախիմների և ցուցմունքների հետ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման բնագավառում:

Այդպիսով՝ «կապիտալիստական սեկտորը վոչընչանում է: Մանր ապրանքային տնտեսութիւնը կոլեկտիվացվում յե, դառնալով խոշոր հանրայնացված տնտեսութիւն: 1931 թվին մեր գյուղերի կոլխոզների դաշտերում աշխատող տրակտորները կունենան 990 հազ. ձիու ուժ: Սոցիալիստական սեկտորը զարգանում է սրընթաց արագութեամբ: Մոտակայում «ովում» հարցը, պրոլետարիատի և կապիտալիստական աշխարհի անհաշտ պայքարի հարցը յերկրի ներսում կլուծվի վերջնականապես, և այդպիսով այդ հար-

ցը կփոխադրվի համաշխարհային ասպարեզ: Մենք արգեն սկսել ենք լիկվիդացիայի յենթարկել վերջին լուրջ կապիտալիստական դասակարգը մեր յերկրում՝ կուլակութիւնը: Հնգամյակի վերջում մենք կունենանք միասնական սոցիալիստական սեկտոր և՛ քաղաքում, և՛ գյուղում: Մենք վիթխարի քայլեր ենք առնում քաղաքի և գյուղի փոխադարձ հակասութիւնները վոչնչացնելու գործում, ստեղծում ենք սովխոզներ, հացահատիկի այդ խոշորագույն ֆարրիկաները, կոլխոզներ, տալիս ենք գյուղերին մեքենաներ և տեխնիկա, այն էլ այնպիսի չափով և այնպիսի ծավալով, վորոնց ընդունակ չեր հին ցարական իմպերիալիստական Ռուսաստանը» (Ա. Կոսարե, ղեկուցում Համ. ԷկՅԵՄ IX համագումարում):

Ժողովրդական տնտեսութիւնն ալանը նախագրծում է ավարտել 1931 թվին սոցիալիստանան տնտեսութիւն հիմքի կառուցումը: Ի՞նչ է նշանակում ավարտել սոցիալիստական տնտեսութիւն հիմքի կառուցումը: Դա նշանակում է «ստեղծել սոցիալիզմի տնտեսական բաղան, դա նշանակում է միացնել գյուղատնտեսութիւնը սոցիալիստական արդյունաբերութիւն հետ մի ամբողջական տնտեսութիւն մեջ, յենթարկել գյուղատնտեսութիւնը սոցիալիստական արդյունաբերութիւն ղեկավարութիւնը, փակել և լիկվիդացիայի յենթարկվել այն բոլոր միջոցները, վորոնց ոգնութեամբ ստեղծվում են դասակարգեր, վորոնց ոգնութեամբ ստեղծվում է ամե-

նից առաջ կապիտալը,—ստեղծել արտադրութեան և բաշխման աշխարհի պայմաններ, վերոնք տանում են ուղղակի և անմիջականորեն դեպի դասակարգերի վախճանը»:

Ահա թե ինչպիսի դրութիւնն է մեզնում:

Սոցիալիստական շինարարութեան ընդհանուր աճի հիման վրա աճում է նաև մեր յերկրի բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիների բարեկեցութիւնը: Բանվորների և անչափահասների ռեալ աշխատավարձի սիստեմատիկ աճը, աշխատանքային որակ կրճատումը, կուլտուրական մակարդակի աճը, գործազրկութեան լիկվիդացիան և այլն՝ անվիճելիորեն հաստատում են ասվածը: Ահա մի քանի տվյալներ.

ԽՍՀՄ ժողովրդական յեկամուտը 1927 թվից մինչև 1929—30 թիվը մեծացավ 23 միլիարդ ռուբլուց մինչև 34 միլ. ռ.: Բանվորների միջին աշխատավարձը 1926 թվից սկսած աճել է 45%-ով և 1930 թ. առաջին կեսին բարձրացավ 90%-ով: Ռեալ աշխատավարձը բանվորների նախապատերազմական ժամանակի աշխատավարձի համեմատութեամբ բարձրացավ 139%-ով, իսկ նկատի ունենալով նաև սոցիալական ապահովագրութիւնը և այլն, մեծացել է 164%-ով:

Այս բոլորից ի՞նչ է հետևում: Դրանից հետևում է, վոր, հակառակ կապիտալիստական յերկրներին, վորտեղ գոյութիւն ունի անընդհատ աճող տնտեսական ճգնաժամ, աշխատավոր մասսաների աղքատացում և ուժեղ կեղծքում, սոցիալիզմ կառուցող յերկրում հընդ-

ամյակը կատարվում է 4 տարում, սիստեմատիկ կերպով աճում է աշխատավորների նյութական-կուլտուրական բարեկեցութիւնը և կան հաղթանակող սոցիալիզմի պարզ հեռանկարներ: Պրոլետարական հեղափոխութեան և սոցիալիզմի պրոպագանդի համար հազիվ թե կարելի լինի գտնել ավելի լավ միջոց, քան մեր յերկրի այդ խաղորագուշն նվաճումները:

Ի՞նչ դրութիւնն է տիրում կապիտալիստական յերկրներում: Կուսակցութեան XVI համագումարը մեր ժամանակաշրջանը ընդողեց իբրև բեկման ժամանակաշրջան ինչպես սոցիալիզմ կառուցող յերկրի, այնպես և կապիտալիստական յերկրների համար: «Սակայն,—ասում էր ընկ. Ստալինը XVI կուսհամագումարում,—այդ յերկու բեկումների միջև արմատական տարբերութիւն կա: Այն ժամանակ, յերբ այդ բեկումը ԽՍՀՄ-ի համար շրջադարձ էր հանդիսանում դեպի ավելի լուրջ տնտեսական վերելք, կապիտալիստական յերկրների համար այդ բեկումը շրջադարձ էր հանդիսանում դեպի տնտեսական անկում: Մեզ մոտ ԽՍՀՄ-ում կա սոցիալիստական շինարարութեան աճող վերելք և՛ արդյունաբերութեան և՛ գյուղատնտեսութեան մեջ: Այնտեղ՝ կապիտալիստների մոտ գոյութիւն ունի տնտեսութեան աճող ճգնաժամ և՛ արդյունաբերութեան և՛ գյուղատնտեսութեան մեջ»:

Ներկայումս կապիտալիզմը քայքայվում է: Ճգնաժամը, ընդրկելով կապիտալիզմի թրիթը բոլոր երկրները, գնալով ավելի ու ավելի յե խորանում և մի շարք



յերկրներում դառնում են քաղաքական ճգնաժամ: Ձախ-
ջախվում են կապիտալիզմի և նրա սխտեմի «կազմա-
կերպվածություն» մասին յեղած բոլոր թեորիաները:
Ծիծաղելի յեն դառնում նաև կապիտալիստների դատա-
րկաբանությունները, վերոնք ճգնաժամի պատճառ-
ներն ուղղում են բացատրել խորհրդային «դեմպինգով»
և այլն: Զուր ջանքեր: Պարոն կապիտալիստները թող
հասկանան, վոր տնտեսական ճգնաժամի պատճառնե-
րը և նրա անկումը կապիտալիզմի բնույթի և կապի-
տալիստական իրավակարգի սխտեմի մեջ են դրված:
1930 թվին պրոլետարական պետության արդյունա-
բերության արտադրանքը աճեց $25\frac{0}{10}$ -ով: Իսկ ինչ
պես և կապիտալիստների ժող: Ամերիկայում՝ անկում
 $18,6\frac{0}{10}$, Անգլիայում՝ $8,4\frac{0}{10}$, Գերմանիայում՝ $14,2\frac{0}{10}$,
Լեհաստանում՝ $26,2\frac{0}{10}$ և այլն*):

Արտադրության կրճատման հետևանքով վաճառ-
գործն ուժեղացնում են բանվորների կապիտալիստա-
կան շահագործումը, յերկարացնելով աշխատաժամը և
կրճատելով աշխատավարձը, արտադրությանից դուրս
են շարժում տասնյակ և հարյուր հազարավոր բան-
վորների, գնալով ավելի յե սրվում կապիտալիստների
և նրանց գործակալների պայքարը որեցոր աճող և
ուժեղացող հեղափոխական շարժման դեմ:

Հետաքրքիր և քննել նաև բանվոր յերիտասար-

*) Տվյալները վերցրված են ՀԼԿԵՄ IX Համագումարում
արված ընկ. Կոսարևի ղեկուցումից:

դույթյան և անչափահասների դրույթյան հարցը մեզ մոտ
ԽՍՀՄ-ում և կապիտալիստական յերկրներում: Ինքն-
բատինքյան հասկանալի յե, վոր շահագործման ճնշու-
մը և բանվոր դասակարգի կենսական մակարդակի
կրճատումը կապիտալիստական յերկրներում չի կա-
րող չանդրադառնալ նաև բանվոր յերիտասարդույթյան
վրա: Աշխատավարձի չնչին մակարդակը և կրճատու-
մը, աշխատանքային որվա յերկարացումը, գործա-
դրկույթյան աճն անչափահասների մեջ և այլն, — այս
բոլորը բնորոշ և ամեն մի կապիտալիստական յերկրի
համար: Ահա մի քանի տվյալներ Արեմուտքի յերի-
տասարդույթյան դրույթյան մասին. Գերմանիայում
յերիտասարդ մետաղագործը շահաթական վաստակում
և 12—16 մարկ, այսինքն՝ շարվել 6—8 ուրլի կամ
24—32 ուրլի ամիսը: Լոճում (Լեհաստան) յերիտա-
սարդ մանածագործը վաստակում և ամսական ամե-
նաշատը 35 դլոտի (մոտ 8 ուրլի): Ֆրանսիական
յերիտասարդ բանվորը կես ամսում վաստակում և
110—130 ֆրանկ կամ 7—8 ուրլի: Դրան պետք և
ավելացնել աշխատավարձի սխտեմատիկ իջեցումը,
վորը հարվածում և առաջին հերթին յերիտասարդու-
յթյանը, 8—9 ժամվա աշխատանքային որ, վորը նուե-
լիսկ 12 ժամի յե հասնում (Գերմանական յերիտասար-
դույթյան բուրժուական միւլույթյան պաշտոնական
տվյալներով՝ յերիտասարդ բանվորների 40 տոկոսն
աշխատում և որական 10 ժամ, 30 տոնոսը՝ 9 ժամ),
գործադրկույթյան աճը և այլն (կապիտալիստական
յերկրներում 1930 թ. դեկտեմբերին յեղած 25 միլիոն

գործադուրկներինց առնվազն 6 միլիոնն ընկնում է յերիտասարդությանը): Ամերիկայի Միացեալ Նահանգներում գործադուրկ յերիտասարդությունը նպաստ բոլորովին չի ստանում, իսկ յեմբողական յերկրներում նպաստներ ստանալը խիստ սահմանափակված է:

Իսկ Բնչպես է բանվոր յերիտասարդության դրությունը մեղնում: Կենսական մակարդակի վերելք, աշխատավարձի աճ, աշխատանքային որվա կրճատում, սոցալահոսիալիզացիան, գործադրկության վերացում և այլն—այս բոլորը բնորոշ է մեր յերկրի և՛ բնավոր յերիտասարդության ու անչափահասների համար: Ընկ. Կադանովիչը իր ղեկուցման մեջ՝ ՀԼԿՅԵՄ IX համագումարում բերել էր չափազանց հետաքրքիր տվյալներ ԽՍՀՄ յերիտասարդ բանվորների դրության մասին: Կարծում եմ, վոր այդ տվյալները ղգալի չափով բնորոշ են նաև Վրաստանի բանվոր յերիտասարդության և անչափահասների կենսական մակարդակը պարզելու համար: Ահա այդ տվյալները. «Մոսկեիքտրիկ»—Ս. Վ., 18 տարեկան, կոմյերիտ, փականագործի աշակերտ: Գործարանում աշխատում է մի տարի, այժմ ստանում է 100 ռուբլի, մի տարի առաջ ստանում էր 72 ռ.: Յերեկոնները սովորում է տեխնիկումում գործարանային վարչության հաշվին:

Ընտանիքը բաղկացած է 4 հոգուց, աշխատում են յերեքը, ընդհանուր աշխատավարձը՝ 380 ռ.: Բնակարանի տարածությունը 4 սափեն է: Փողը տալիս է ընտանիքին, իր մոտ թողնում է 30 ռուբլ.: Այդ փողը

ծախսում է անդամակցական վճարներին, ծխախոտին և կինոյի վրա: Աշխատանքից գոհ է, ուժեղից՝ նույնպես:

I-ին որինակելի տպարան: Կազմարարական ցեխ. Յե. Ա. 18 տարեկան, անկուսակցան, կազմարար: 1 տարի յե աշխատում է, աշակերտ է: 6 ամիս առաջ ստանում էր 30 ռ., այժմ ստանում է 75 ռուբլ.: Ինքնուրույն կյանք է վարում: Մահճակալի վարձ վճարում է 15 ռուբլի: Սովորում է պրոֆտեխնիկական կուրսերում, վճարում է գործարանի վարչությանը: Սովորում է շաբաթը 4 ուր, մնացած ժամանակը՝ խմբակներում: Վճարում է բնակարանային կոոպերատիվին՝ սենյակ ըստանալու համար: Աշխատածը հերիք է անում՝ միջակ ապրելու համա, քանի վոր փակ բաշխիչում ամեն ինչ կա և լավ ճաշարան: Ծնողներն ապրում են գյուղում: Բնակարանի պայմաններն այնքան լավ չեն, քայց շուտով սենյակ կստանա:

Մանվածագործների (տեքստիլչիկ) մեջ կենսական մակարդակը մի քիչ ցած է: Ահա տվյալներ՝ «Տրյոխգորնայա մանուֆակտուրա» ֆաբրիկայից:

Կոմերիտ պատանի յե, աշխատում է ուղալնի ցեխում իբրև կնքող, կտորով աշխատող է, վաստակում է ամիսը 90 ռուբլ.: Իր ամբողջ աշխատավարձը տալիս է մորը և կարիք ունեցած ժամական ստանում է նրանից: Ընտանիքը բաղկացած է 6 հոգուց: Ընտանիքում հայրն էլ է աշխատում, ստանում է 100 ռ.: Վոչ մի տեղ չի սովորում, բացատրում է նրանով, վոր բշիջը բաց չի թողնում: Յերեկոններն անց է կացնում ակմբում և բշիջի ժողովներում:

Ֆարգավուչի աղջիկ: Աշխատում է ներկարարների ցեխում, ըստ դրույքի ստանում է 21 ուրբ, կոմունալ և տրամվայի փողի հետ միասին՝ 36 ու, արդեն 3 ամիս է սովորում է: Ընտանիքում 7 հոգի յեն: Աշխատող է նաև հայրը, ստանում է 80 ուրբ, աշխատում է նույն ֆաբրիկայում: Կուզեմ լինել ինժեներ-մանածագործ, բայց ասում է վոր կոնտրակտացիայի յե յենթաբժիկ էլ մինչև հնգամյակի վերջը, նրան բաց չեն թողնի, սովորելու կզնա հետո: Ստացած աշխատավարձը հերիք չի անում, նույնիսկ ծնողներն են տալիս:

Մի ուրիշ աղջկա ընտանիքում 3 հոգի յեն: Աշխատում է մայրը, ստանում է 65 ուրբ, փոքր քույրիկը դպրոց է գնում, յերեկոները անց է կացնում «ինչպես բոլորը»: Գանգատվում է, վոր վարպետները չեն թողնում ինքնուրույն աշխատել, այլ անպայման բանվորուհիների հետ, կարծես յերեխաներ լինեն:

Ֆարգավուչի աղջիկ, հանդուգն և հպարտ: Ֆաբրիկացիների ցեխկոլեկտիվի քարտուղարն է, ստանում է 21 ու, ապրում է մոր հետ: Բոլոր յերեկոները դըրազված է՝ ժողովներում կամ աշխատանքում, այն հարցին, թե բավականանում է ուձիկը և ինչպես է ծախսում իր աշխատավարձը, պատասխանեց այսպես. յերեք ուրբի ծախսվում է լրագրների և գրքերի վրա, 15 ուրբի՝ ուտելիքի, իսկ հազուստի համար վոշինչ չի մնում:

Ֆարգավուչի աղջիկ. 2-րդ տարին է՝ սովորում է, արտաքինից յերեւում է, վոր սիրում է հագնվել, ապ-

րում է հոր և մոր հետ: Հայրը նույն տեղում փակահագործ է, ստանում է 100 ուրբ: Աղջիկն էր աշխատավարձը տալիս և ծնողներին, իր կարիքներին հարիքների համար ստանում է նրանցից: Ֆարգավուչն ավարտելուց հետո մտադիր է ինժեներ-մանածագործություն սովորել:

Գործարան «Դինամո»: III կարգի խառատ (տոկար): 19 տարեկան է, անկուսակցական: 2 տարի յե, ինչ աշխատում է գործարանում, Աշխատավարձը 100 ուրբի յե. կես տարի առաջ վաստակում էր 30-40 ուրբ: Ապրում է ընտանիքում: Ընտանիքում 4 հոգի յեն: Ընտանիքի ընդհանուր յեկամուտը 300 ուրբի յե: Բնակարանը ձրի յե: Վոչ խմում է, վոչ ծխում: Փողը տալիս է հորը, ճաշում է գործարանում (ճաշը՝ 38 կոպ.): Սովորում է տեխնիկումում (յերեկոյան): Ուստի աշխատում է 6 ժամ: Բնակարանը գործարանի կողքին է:

III կարգի խառատ: 23 տարեկան է, կոմկուսի անդամ: Իրրե խառատ աշխատում է 1930 թ. հոկտեմբերից, վաստակում է 85 - 100 ուրբի: Մինչ այդ սովորել է աշակերտական բրիգադում, ստացել է 72 ուրբ, ապրում է մենակ, 25 ուրբի յե ուղարկում գյուղ մոր համար, իր «սնկյունի» համար վճարում է 17 ուրբի: Սովորում է բանֆակում: Աշխատում է 6 ժամ, շինում է կոլլեկտորային տուփեր:

II կարգի խառատ: 18 տարեկան է, կոմյերիտ: Նոր է սկսել աշխատել: Առաջին ամսում ստացել է 80 ուրբ: Մինչ այդ սովորելիս է յեղել խառատ բանվո-

րի մոտ 4 ամիս, ստանալով 45 ուրբի: Ապրում ե 6 հոգուց բաղկացած ընտանիքում: Ընտանիքի ընդհանուր յեկամուտը 160 ուրբի յի:

17 տարեկան աղջիկ, սովորում ե իզուրբոփնի ցիխում: Աշխատում ե 4 ժամ, սովորում ե 4 ժամ, ստանում ե 28 ուրբի: Ապրում ե ընտանիքում: Ընտանիքի յեկամուտը 300 ո. ե: 4 հոգով ապրում են 4 սաժեն տարածության վրա: Փողը տալիս ե մորը, իր մոտ թողնում ե ճաշի և կիսոյի համար: Շորը տանն են կարում: 3 ամիս ե, ինչ գործարանումն ե: Առաջ չեր աշխատում:

17 տարեկան աղջիկ, սովորում ե, աշխատում ե 4 ժամ, սովորում ե 4 ժամ: Ապրում ե ընտանիքում: Հայրը և քույրը աշխատում են 350 ուրբի: Մայրը գյուղումն ե. նրան ուղարկում են ամիսը 50—60 ո., ապրում են 4 հոգով մի սենյակում, վորը 2 սաժեն ե և մի պատուհան ունի: Փողը տալիս ե հորը:

Կարիք չկա համեմատելու այս ցուցանիշները կապիտալիստական յերկրների յերիտասարդ բանվորների դրությունը պատկերացնող ցուցանիշների հետ: Ինչ են ասում այդ տվյալները: Ընկ. Կազանովիչը պատասխանում ե. «Ինչպես տեսնում եք, այդ տվյալները հավաքվել են կենդանի մակղկանցից հարցումների միջոցով, առանց գեղեցկացնելու: Այդ որինակների թիվը կարելի յեր մեծացնել, բերվածն ել բավական ե, վորպեսզի պարզ լինի, թե վորքան աճում ե մեր բանվոր յերիտասարդության նյութական բա-

րեկեցությունը»: Ահա թե ինչ դրություն ե մեզնում: Ի հարկե, մենք չենք կարող բացասել այն փաստերը, յերբ արդյունաբերության մի շարք ճյուղերում հասակավոր բանվորների աշխատավարձի մեծանալու հետ միասին անբավարար թափով ե բարձրանում անչափահասների աշխատավարձը, վոչ բոլորն են ապահովված բնակարանային լավ պայմաններով և այն, բայց ամեն մի յերիտասարդ բանվոր համոզված ե, վոր տարեցտարի բարելավվելու յե իր նյութական և կենսական մակարդակը:

Ինչպես սոցիալիստական շինարարության, այնպես և բանվորների ու բանվոր յերիտասարդության նյութական բարեկեցության բարելավման բնագավառում մեր բոլոր աջողությունները մենք ձեռք ենք բերել սրվող դասակարգային պայքարի պայմաններում, խաղաղությունը պահպանելու համար մղվող պայքարում, ընդեմ պատերազմ հրահրողների և ներանց գործակալների՝ կուլակների ու ֆեոսարարների: Մեր բոլոր աջողությունները կատարեցնում են մեր ներքին և արտաքին թշնամիներին, նրանք կազմակերպում են իրենց ուշիկը՝ վոչնչացնելու համար աշխարհիս առաջին պրոլետարական պետությունը, վորը մարեկեցության պատուության մեջ աննախընթաց տեմպերով առաջ ե շարժվում գեպի սոցիալիզմ: Ընկ. Կոսարեկը դուր չեր, վոր կոչ եր անում կենիյան կոմյերիտիության. «Մեր աջողությունները ցնցում են կապիտալիզմի հիմքերը: Սոցիալիստական շինարարու-

թյան աջողութիւններով մենք կարագացնենք բուր-
ժուազիայի կործանումը: Այժմյան պայմաններում,
ժամանակակից բնույթի դասակարգային պայքարի
ժամանակ ուլ տալիս ե լավորակ աշխատանք և ամե-
նաբարձր տեմպեր, նա բառացի կերպով վոչնչացնում
ե բուրժուազիային, հոր ե փորում կապիտալիզմի հա-
մար, գերեզման ե իջեցնում նրան, խեղդում ե նրան,
վտարում ե աշխարհի յերեսից: Ուլ տալիս ե լավագույն
վորակ և աշխատանքի ամենաբարձր տեմպեր, նա հան-
դիսանում ե մեր թշնամի դասակարգի ամենավորակ-
յալ, ամենաառաջվոր գերեզմանափորը, այսինքն կա-
պիտալիստական դասակարգի գերեզմանափորը:

Ընթացիկ 1931 թիւը, ամբողջ ֆրոնտով մղվող
սոցիալիստական հարձակման այդ իսկապես վոր վըճ-
ռական տարին, պետք ե անցնի մեր աշխատանքի վո-
րակի հետագա բարձրացման նշանի տակ, ինդուստ-
րացման բարձր տեմպերի նշանի տակ, պրոլետարա-
կան ղիկաւորայի բոլոր թշնամիների և նրանց՝
մեր շարքերում ունեցած զործակալների դեմ մղվող
անողոք պայքարի նշանի տակ: Այս 2 տարում մեր
կուսակցության և նրա կենտրոնական կոմիտեյի բոլ-
շեիկյան ղեկավարութեամբ ձեռք բերված վճռական
հաղթանակները մեզ ել ավելի մեծ ույժ և հավաստիք
են տալիս, վոր 1931 թվի համար կուսակցության նա-
խագծած ծավալուն ծրագիրը կկատարվի հաջողու-
թեամբ:

Վրաստանի կոմյերիտմիութիւնը, վորը շատ ան-
գամ ե ապացուցել մեր կուսակցության վերաբերմամբ

իր ստանձնած հավատարիմ ոգնականի դերը, այս ան-
գամ ևս, 1931 վճռական տարում, պետք ե իր ամբողջ
աշխատանքը, իր զործողութեան ամեն մի քայլը յեն-
թարկի կուսակցութեան ղիկավոր գծի զործնական
իրականացման խնդիրներին: Չպետք ե մոռանալ, վոր
մեր առաջիկա ամբողջ աշխատանքը, կուսակցութեան
և խորհրդային իշխանութեան բոլոր միջոցառումները
ինչպես մինչև այժմ, այսպես և այսուհետե տեղի կու-
նենան մեր աճի դժվարութիւնները հաղթահարման
պայմաններում, բոլոր հակախորհրդային տարրերի,
կուլակութեան, քրասարարների և նրանց գործակալնե-
րի՝ աջ և ձախ՝ ոպորտունիստների ամենակատաղի
գիւմադրութեան պայմաններում: Նման պայման-
ներում ամեն մի բջիջի, ամեն մի կոմյերիտի,
ամեն մի ախտիվիտի համար առաջնակարգ խըն-
դիր ե հանդիսանում դասակարգային աջաբշու-
թեան, հեղափոխական տոկունութեան և վճռականու-
թեան ել ավելի բարձրացումը դասակարգային թշնա-
միները դեմ յերկու ֆրոնտով մղվող պայքարում: Դա-
սակարգային պայքարի սրվածութիւնը և դրանից ա-
ռաջ յեկող դժվարութիւնները խուճապային տրամա-
դրութեան են ներշնչում կուսակցութեան և կոմյե-
րիտմիութեան անկաշուն ողակներին, անհավատալի
յեն դարձնում հաղթանակը, առաջ են բերում մանր-
բուրժուական տատանումներ ու թեքումներ կուսակ-
ցութեան ճիշտ լենինյան գծից: Ահա թե ինչու աջ-
ձախ՝ բոլիկ ստեղծած աջ տարրերի ախտիվացումը

պատահական չէ, նա ցույց է տալիս, թե ինչպէս մեր դասակարգայնորեն թշնամի ույժերի դիմադրությունը որեցոր ալելի յե ուժեղանում:

Վերջին ժամանակաշրջանում, Վր. ԼԵՅԵՄ IX համագումարից հետո, Վրաստանի կոմյերիտմիությունը կանգնած է յեղել հաստատ յենինյան դիրքերում, վճռական և անողող պայքար մղելով ամեն տեսակ հակալենինյան ոպորտունիստական թեքումները դեմ կուսակցության կոմյերիտմիության շարքերում:

Վրաստանի կոմյերիտմիությունն ամբողջ միության հետ միասին ինչպէս հակահեղափոխական տրոցկիզմի, այնպէս և աջ ոպորտունիզմի և հաշտվողականության դեմ մղվող պայքարի բոլոր եռապներում կուսակցության ղեկավարությամբ դրսևվորել և իրեն բոլշիկորեն կայուն, ամրացնելով այդ պայքարում իր շարքերը: Կուսակցության այդ ժամանակամիջոցում իր հիմնական հարվածները կենտրոնացրել և գլխավոր վտանգի՝ աջ ոպորտունիզմի, իբրև կուլակուլության շարքերում մքովող պայքարի վրա: Այլ թեքումը այժմ ել հանդիսանում է գլխավոր վտանգ: Ի՞նչու: Վերոմիհետև, — ասում է Ստալինը, — աջ թեքումը ներկա ծավալուն հարձակման ժամանակ արտահայտում է կուլակային վտանգը և հանդիսանում է հիմնական վտանգը մեր յերկրում:

Այլ տարրերը, ինչպէս նաև «ձախ» տրոցկիստները համամիտ չեն կուսակցության հետ մեր հեղափոխության դարգացման հիմնական հարցերում: Վերոհ

են աջերի հիմնական դիրքավորումները: Ինդուստրացման տեմպերի թուլացում, սեփականատիրական-կապիտալիստական տարրերի պաշտպանումը գյուղում, խոսակցությունները պրոլետարական դիկտատուրայի թուլացման մասին, դժվարություններին անձնատուր լինելը և այլն:

Յեթե աջերի ծրագրերը համեմատելու լինենք Կոնդրատյեի, Ջայանովի և մյուսների այսպէս կոչված աշխատավորական գյուղացիական կուսակցության, ինչպէս նաև մենշևիկներ՝ Սուխանովի, Գրոմանի և մյուսների ծրագրի հետ, չի կարելի չնկատել, վոր այդ ծրագրները զուգադիպում են իրար: Դա հենց պարզ ցույց է տալիս, վոր Կոնդրատյե—Գրոմանի և աջ ոպորտունիստների գաղափարական աստուր միևնույնն է, և այդ աստուր դասակարգայնորեն մեղ թշնամական է, կուլակային: Ուստի հասկանալի յե, վոր կուսակցությունը, բանվոր դասակարգը և կոմյերիտմիությունը չեն կարող աջ ուկլոնիստներին չհամարել կուլակային գործակալություն: Կուսակցությունը և կոմյերիտմիությունը շատ ժամանակ չե, ինչ տեսան ոպորտունիստների նոր մանյովը՝ յերկերեսանիությունը: XVI կուսհամագումարը իր վորոշումներում նախադգուշացնում էր կուսակցությանը, վոր ոպորտունիստները կուսակցության գծի դեմ պայքար մղելիս կգործադրեն նոր մանյովներ՝ կուսակցության գլխավոր գծի ճանաչում խոսքով, իսկ գործով նրա գործադրության խանգարում: Սիրցով

և Լոմինաձեյի զլիսավորութեամբ կազմված այդ բլուրը, վորը կանգնած էր աջերի պլատֆորմայի վրա, նախկին բոլոր ոպոզիցիոն հոսանքների և խմբավորումների օրինակով իր դավաճանական աշխատանքն սկսեց ամենալիքը զրպարտութեամբ մեր կուսակցական ապարատի և պրոլետարիատի գիկատուրայի դեմ: Կուսակցութեանը և խորհրդային իշխանութեանը զրպարտելու գործում նրանք այնքան հեռու գնացին, վոր Լոմինաձեյի կամ Սիրցովի լեզուն դժվար էր դանազանել ամենաթուզ հակահեղափոխականի լեզվից: Իրենց հայտարարություններում մինչև մեր հասան նրանք: «Աղաղակող բյուրոկրատիզմ, անպատասխանատվություն, հեռացում մասսաներից, աղա-ֆեոդալական վերաբերմունք գեպի բանվորների ու գյուղացիների կարիքներն ու շահերը» (Լոմինաձեյ), իսկ Սիրցովն իր աշխատութեաններում հայտարարեց. «Անկարելի չէ չնկատել հուզումնալի ազդանշանները, վորոնք ցույց են տալիս, վոր բյուրոկրատացումը, վորը վերջին ժամանակներս չափազանց լայն ծավալ է ստացել, ինքնաբերաբար կապկպում է բանվորների տնտեսավարների ամբողջ խմբակների նախաձեռնութեանը», վոր «յերբեմն մեղմում բյուրոկրատիզմի դեմ մղվող պայքարը դառնում է բյուրոկրատիզմի լրացուցիչ գործոն»:

Ամեն տեսակի և գույնի ոպորտունիստները միշտ հակված են չափազանցնելու դժվարութեանները և հանելու իրենց ոպորտունիստական յեզրակացութեան-

ները: Այնուհետև Սիրցովը հայտարարում է. «Մենք ինքնահոռով և բավական կուրորեն ու անկազմակերպ կերպով մտանք տնտեսական այնպիսի յերևույթների բնագավառը, վորոնք այժմ ամբողջ յերկրի անհանգիստ քննութեան առարկա յեն հանդիսանում»: «Անպատասցուցանիշները (հնգամյակի 2-րդ տարվա հանրագումարի) մի բիշ մոայլ գույներով են ներկում յեկող տարվա հեռանկարները»: «Մենք ունենք մեր տնտեսավարութեան պրակտիկայում, մասամբ նաև թեորիայում, կուտակված ֆլասակար իլյուզիաների սնունկացում»:

Հնգամյակի յերրորդ տարվա նման «հանրագումարից» նրանք յեզրակացնում են, վոր «մեր տեմպերն իրական չեն», վոր «հարկավոր է նեղացնել կապիտալ շինարարութեան ֆրոնտը»: Բնորոշ է, վոր մեր շինարարութեան տեմպերը կծկելու մասին խոսք բաց արին միաբերան և՛ աջերը (Սիրցով) և «ձախերը» (Լոմինաձեյ, Շացկին և այլն): Սիրցովն իր յերևույթներից մեկում ասաց. «Մեր տնտեսական շինարարութեանը շատ հեռու յէ ճիշտ ազդանշանային տպասարկումով աղահովված լինելուց», վոր մեր ճեղքերի և մեր անաջողութեանների ծավալը կարող է մեծանալ, յեթե միայն մենք բավարար չափով կամք չունենանք անգուղար ուղղութեան տալու այդ սիգնալիզացիային»: Այդ ժարգիկ Տրոցկու նման փորձում էյին փրկել կուսակցութեանը, հանդես գալ սիգնալիզատորների դերում: Յերբ կուսակցութեանը կռվում էր Զինույթվա-Տրոց-

կիսատական ուղղիցիայի դեմ՝ ընկ. Ստալինը հրաշալի կերպով բնութագրեց նման սիգնալիզատորներին.

«Սյդ սիգնալիզատորները ուզում են փրկել կուսակցութիւնը կործանումից, մինչդեռ իրենք են կործանվում, մինչդեռ իրենք փրկութիւն կարիք ունեն։ Միթե ծիծաղելի չե՞ս այդ, ընկերներ։ Յե՛վ իսկապէս բավական ծիծաղելի չե՞ս դառնում, յերբ կուսակցութիւն հիմնական դիրքավորումները ռեվոլյուցիոն յենթարկող հակակուսակցական բոլոր իր ծառայութիւններն եւ առաջարկում կուսակցութիւնը իբրեւ «սիգնալիզատոր»:

Ահա թե ինչու կուսակցութիւնը եւ ամբողջ Լենինյան կոմյերիտմիութիւնը հանդես յեկան եւ ամենավճռական հարված հասցրին աջ—«ձախ» բոլորին եւ նրանց ներկայացուցիչներին, մասնավորապէս Անդրկովկասում եւ Վրաստանում։ Հինց այստեղ պետք ե հիշել այն սխալները, վոր թույլ եյին տրվել այն ժամանակ, յերբ այդ բոլոր հայտնաբերվեց ՀԼԿՅՑՄ նախկին Անդրյերկկոմի եւ հանրապետութիւնների ԼԿՅՑՄ Կենտկոմների ղեկավարութիւն մեջ։ Այդ սխալները հարկավոր ե միանգամ եւ մատնանշել՝ հենց այն պատճառով, վոր այդ սխալներից պետք ե համապատասխան դաս առնել ե թույլ չտալ նրանց կրկնութիւնն ապագայում։ Այդ սխալները հիմնականում հանգում են այն բանին, վոր ՀԼԿՅՑՄ յերկրային Կոմիտեի նախկին ղեկավարութիւնը աջ—«ձախ» բոլոր սոսկ վորսեւորվելու ժամանակ չկարողացաւ ժամանակին

եւ արագ մորիլիզացիայի յենթարկել Անդրկովկասի կոմյերիտական կազմակերպութիւնները յերկու Ֆրոնտով պայքարելու համար, նաեւ այդ բոլորի դեմ, մինչեւ վերջ չմերկացրեց այդ բոլորի անանձին ներկայացուցիչներին ե համախոհներին Անդրկովկասում, չըդրսեցիչներին ե համապատասխան աշարջութիւն վորեց բոլշեւիկյան համապատասխան աշարջութիւն դեպի Լոմինաձիւր ե նրա խմբակի տված հակակուսակցական գիրքավորումները՝ կուսակցութիւն յերկրային կոմիտեիում նրանց յեղած ժամանակ (1930 թ. հոկտեմբերի 4-ի դիմումը), իրեն կորցրեց, վորը ե անդրադարձաւ «Մալադոյ Ռարոչի» յերկրային որդանի ե ԼԿԶՑՄ հանրապետական կենտկոմների վրա:

Հակառակ ՀԼԿՅՑՄ Անդրյերկկոմի ե ԼԿԶՑՄ հանրապետական Կենտկոմների այդպիսի վարքագծի, Անդրկովկասի բոլոր ստորին կազմակերպութիւնները ե ամենից առաջ առաջադեմ պրոլետարական կազմակերպութիւն՝ Բազլի կոմյերիտմիութիւնը հանդես յեկան կուսակցութիւն ղեկավարութիւնը ե վճռականապէս մերկացրին աջ—«ձախ» բոլոր, ճիշդին նրանց ոժանդակողներին դիմակը կուսակցութիւն ե կոմյերիտմիութիւն մեջ, ցույց տվին իրենց՝ ղեկավար կոմիտեիական կուսակցութիւն բոլշեւիկորեն կայուն մոնիստական կուսակցութիւն բոլշեւիկորեն կայուն կազմակերպութիւններ։ Միաժամանակ միանգամայն կազմակերպութիւններ։ Միաժամանակ (ստորին կազմական ե ճիշտ եր նրանց պահանջը (ստորին կազմակերպութիւններից)՝ փոխել ՀԼԿՅՑՄ յերկկոմի ղեկավարութիւնը, վորը թույլ եր տվել քաղաքական կոպիտ սխալներ:

Պետք է հիշել, վոր ոպորտունիստական վտանգը կոմյերիտմիության մեջ զգալի չափով ավելի մեծ է, քան թե կուսակցության մեջ: Կոմյերիտմիությունը անհամեմատ ավելի պակաս է կոփված, քան թե կուսակցությունը, ունի ավելի լայն սոցիալական բազա, և բնական է, վոր կոմյերիտմիության մեջ ավելի լայն հող են դառնում ամեն տեսակ տատանումները:

Այստեղ հարկավոր է կանգ առնել աջերի պլատֆորմայի վրա՝ բոլոր հարցերում: Այլ ոպորտունիստների պլատֆորման կոմյերիտական հարցերում հիմնված է այն հարցերի վրա, թե հնարավոր է յերիտասարդ կուլակին «վերադաստիարակել» կոմյերիտմիության մեջ, թերադնհատվում է բատրակության և չքավորության դերը, զարգանում է գործաժուլությունը (делачество):

Վրմանք կարծում են, թե յերիտասարդ կուլակին կոմյերիտմիության մեջ վերադաստիարակելու «թեորիան» այժմ արդեն հնացել է և չարժե ուրեմն խոսել նրա մասին:

